ALLIANCE INTERNATIONAL DE TOURISME

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ
AUTOMOBILE FEDERATION OF ARMENIA (FAA)

FÉDÉRATION INTERNATIONALE DE L'AUTOMOBILE

ՀՀ, ք.Երևան, 0078, Մարգարյան 29/3, Հեռ.՝ (+374 99) 45 45 52 Էլ.փոստ: secretary@faa.am, Վեբ-կայք: www.faa.am
29/3 Margaryan str., 0078, Yerevan, RA Mob.: (+374 99) 45 45 52 E-mail: secretary@faa.am, Website: www.faa.am

***FAA – 013-24***

***«09» ապրիլի 2024թ.***

Երևանի Քաղաքապետ
պարոն Տիգրան Ավինյանին

Հարգելի պարոն Ավինյան,

«Հայաստանի Ավտոմոբիլային Ֆեդերացիա» ՀԿ-ն ս.թ. մայիսի 01-ին նախատեսում է կազմակերպել Հնաոճ ավտոմեքենաների ցուցադրում (40 տարեկան և ավելի) և շքերթ Երևան քաղաքի փողոցներով:

Հնաոճ ավտոմեքենաների ցուցադրումը նախատեսվում է անցկացնել Ս.Շահումյանի արձանին հարող տարածքում ժամը 11:00-ից մինչև 14:00-ը, իսկ շքերթի մեկնարկը լինելու է ժամը 14:00-ին Երևան քաղաքի Ս.Շահումյանի անվան հրապարակից դեպի Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիա փ., 37/5, Սովետ Ակումբ, որին մասնակցելու են մոտ 30 ռետրո ավտոմեքենաներ:

Ելնելով վերոգրյալից, խնդրում եմ Ձեր կարգադրությունը մայիսի 01-ին ժամը 11:00-14:00 նշված տարածքը տրամադրել Ռետրո մեքենաների ցուցադրումը կազմակերպելու համար:

Կանխավ շնորհակալ եմ և հրավիրում եմ Ձեզ մասնակցելու մեր հնաոճ մեքենաների ցուցադրմանը:

Հարգանքով՝

ՀԱՖ-ի նախագահ՝ Արսեն Մանուկյան

Բջջ.՝ (+374 93 ) 50 00 80